Ռափայել Պատկանյան

Մշակ

Շլինքը արևառ, քրտինք երեսին, բեռը շալակած,
Ղարիբ Մըշեցին մայդանի միջին կանգ առավ հոգնած.

Կոշտացած ձեռքը երեսին տարավ, քրտինքը սրբեց,
Հայց երբ որ աչքը չորս կուման դարձուց՝ ծանրը ա՜խ քաշեց,

Տեսավ նա շրքեղ մեծ-մեծ դարբասներ գույնզգույն ներկած,
Պատշգամբի վրրա գոզալ Հայ կանայք շար ի շար նըստած,

Ղումաշ հովհարով մարմար թըշերին հով ու զով տալիս,
Փըրփուր շորերը թեթև քամիեն փըրփըռան գալիս.

Ջուխտակ արտասունք ջուհար ակի պես աչքին ցոլացին.

«Մըշա՛կ, չիլի՞ թե միտքըդ բերիր քու կարոտած յարին»:

Մըշակը լուռ էր, նա ինձ չի տըվեց ոչինչ պատասխան,
Դարբասը թողած՝ աչերը դարձուց նա դեպի մայդան.

Երկլուծ կառքի մեջ տեսավ թեք ընկած մեկ նիհար տըղա,
Չաշմակը աչքին, բերնին նարգիլե՝ զինչ թուրքի աղա.

Մըշակի շրրթին աննըշմարելի մեկ ժպիտ խաղաց.
«Մըշա՛կ, այդ ի՞նչ էր, որ սիրտրդ խոսեց՝ ծա՞ղրը, թե՞ նախանձ»:

Մըշակը ինձի պատասխան չի տվեց, ասես թե լալ էր,
Բայց հոգեբանը իսկույն կիմանար հոգին ի՞նչ հալն էր.

Մայդանը թողած նա աչքը դարձուց լայն, մեծ փողոցին,

Ոչոք չ՚իմանալ, թե այն րոպեին ի՞նչ խոսեց հոգին:

Գունդ-գունդ գալիս էր ձիով ու հետի սպառազեն լաշքյար,
Առջևը առած հարուր ու հազար թըմբկահար, փողհար.

Ցընծալիր երգով զորքը տոնում էր իր հաղթությունը.
Վայ քեզ խեղճ <հայ> քանդել էր քու ազգի տունը...

Մըշակը լուռ-մունջ մեկդի քաշվեցավ, դողդոջուն ոտքով
Իր ճամփան գընաց՝ ծանըր տընքալով, կամաց երգելով.

Բահարն էկավ՝ ծառը ծիլ-ծիլ ծաղկեցավ,
Ձյունը փախավ, երբ արևը ծագեցավ.
Երնե՛կ արևն կամ բահարը մեր Հային
Խելք, միտք, նոր բարք, յա քի նոր վարք շնորհեին:

Հա՛յ, բաց աչքրդ, քու կորուստը մոտիկ է,
Չիմանաս, որ տըրին–տարին զատիկ է,
Յալփազանը, դումաշ շորը քու յարին
Զանդուկներեդ շատ հազարներ դուս տարին:

Ի՞նչ զարար, որ կընկադ փեշը կարճ ըլլա,
Տափն ավլելու համար ասես՝ ավել կա,
Բան կասեի՞ քեզ անօսրը շորի դեմ,
Երբ որ յարիդ բուդը չերևնար տակեն:

Քեզ ո՞վ ասաց, որ ուսումը հագվել է,
Օխտն օտարի հետը գաղտուկ պագվել է.
Թե որ ատ էր՝ տայիր զավակըդ Զուլոյին,
Նա քեզ մուֆթա կըհասցներ քու մուրազին:

Աս ի՜նչ տեսնամ, սելավ կուգա հյուսիսեն...
Հա՛յ մարդ, թեզով ժողվե՛ քու փաս ու փուսեն,
Ա՛ռ գըլոխդ, քոչե՛ դեպի քու աշխարհ,
Քանի օրեն ունըդ-բունըդ չես ճանչնար: